

### ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

COD-ը ստեղծվել է 1989 թվականին՝ ընդունելով քաղաքի հանձնառությունը՝ ընդլայնելու հավասար հնարավորությունները և տրամադրելու քաղաքային ծառայությունները բոլոր հաշմանդամություն ունեցող անձանց: COD-ը պաշտպանում է հաշմանդամություն ունեցող անձանց և քննում է ADA-ի դրույթները խախտելու հարցերը, անցկացնում է հանրային լուսավորական կարևորագույն հարցերի շուրջ, որոշում է առաջնահերթ խնդիրները, որոնք պետք է լուծվեն և առաջարկություններ է անում քաղաքապետին և քաղաքային խորհրդին: COD-ի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր ամսվա երկրորդ չորեքշաբթի օրը: Նիստերի ժամանակացույցը, օրակարգերը և արձանագրությունները կարելի է ձեռք բերել [disability.lacity.org/about/commission-disability](http://disability.lacity.org/about/commission-disability) կայքից:

### ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՔ՝

Լոս Անջելես Զաղաք, Հաշմանդամների Հարցերով Վարչություն 201 North Figueroa Street, Suite 100 Los Angeles, CA 90012  
Էլ. հասցե՝ [DOD.Contact@lacity.org](mailto:DOD.Contact@lacity.org) Հեռ.՝ (213) 202-2764  
Հեռատիպ/ TTY՝ (213) 202-3452  
ՖԱԶՍ՝ (213) 202-2715

*Լոս Անջելես քաղաքը, որը ենթակա է հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի II գլխի կանոններին, խտրականություն չի դրսևորում հաշմանդամության հիմքով և, ըստ պահանջի, տրամադրում է ողջամիտ հարմարեցումներ իր ծրագրերին, ծառայություններին և միջոցառումներին հավասար հասանելիություն ապահովելու համար:*



## Լոս Անջելես քաղաք ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հաշմանդամների հարցերով վարչությունը, ի դեմս Լոս Անջելես քաղաքի, պարտավորվում է ապահովել աշխատանքի, ծրագրերի, հարմարեցումների և ծառայությունների լիարժեք հասանելիություն ռազմավարական կառավարման և գործընկերային ուսուցման, շահերի պաշտպանության, վերապատրաստումների, ուսումնասիրությունների և ծառայությունների բարելավման միջոցով ի շահ հաշմանդամություն ունեցող անձանց, հիմնական ռեսուրսներ տրամադրողների և քաղաքականություններ մշակողների:

### ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1990 թվականին հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքը (ADA) մեծապես ընդլայնեց հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը: Միասին, ADA-ը և 1973 թվականի վերականգնման մասին օրենքը պահանջում են տեղական ինքնակառավարման մարմիններից ապահովել հասանելիություն հանրային հարմարեցումներին, ներառյալ հանրության հատուկ հատվածին աշխատանքով ապահովելը, շենքերը, հաստատությունները, ծրագրերը, սոցիալական ծառայությունները և տրանսպորտը կրանց հարմարեցնելը:

1975 թվականին քաղաքապետարանում ստեղծվել է հաշմանդամների հարցերով գրասենյակ՝ ի պատասխան 1973 թվականի վերականգնման մասին օրենքի, իսկ 1998 թվականին քաղաքապետի և քաղաքային խորհրդի կողմից վերանվանվել է հաշմանդամների հարցերով վարչություն (DOD)՝ որպես իր տեսակի մեջ առաջին քաղաքային վարչությունը երկրում:

DOD-ը պարտավորվում է ապահովել լիարժեք հասանելիություն աշխատանքային ծառայություններին, ծրագրերին, հաստատություններին և ծառայություններին: Վարչությունը կարող է օգնել ձեզ ծանոթանալ քաղաքային ծրագրերին, ինչպիսիք են հասանելի կայանման գոտիները (Blue Curb Program) և մուտքի պահանջի ծրագիրը (Access Request Program): Մեր ծառայությունները ներառում են նաև երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների (DME) ծրագիր, հաշմանդամների հարցերով միջնորդությունների ծրագիր, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ծրագիր, ինչպես նաև օժանդակ օգնություն և ծառայություններ:

### ՈՂՋԱՄԻՑ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Ըստ պահանջի կարող են տրամադրվել ժեստերի լեզվի թարգմանիչներ (SLI), հաղորդակցման հասանելիության համար իրական ժամանակում տառադարձման (CART) ծառայություններ, կյոթեր այլընտրանքային ձևաչափերով և այլ հարմարեցումներով: Լոս Անջելես քաղաքի կողմից հովանավորվող միջոցառմանը կամ հանդիպմանը SLI և/կամ CART ծառայություններ պահանջելու համար այցելեք [disability.lacity.org/requesting-sli-cart-services](http://disability.lacity.org/requesting-sli-cart-services) կայք և ներկայացրեք անոցանոց ձևաթուղթը: Վարչությանն անհրաժեշտ է հինգ (5) կամ ավելի աշխատանքային օր յուրաքանչյուր SLI և CART դիմում մշակելու համար:



## ԲԱԺԻՆՆԵՐ

DOD-ը կազմված է հինգ բաժիններից և հանձնաժողովից, որոնք սպասարկում են Լոս Անջելեսի բնակիչներին, քաղաքի ընտրված պաշտոնյաներին, վարչություններին և Լոս Անջելես քաղաքը:

## ՀԱՇՎՆԳՐԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ (DASD)

DOD-ը համակարգում և վերահսկում է Զաղաքային իշխանության գործողությունների համապատասխանությունը ADA-ին և 1973 թվականի վերականգնման մասին օրենքին:

DASD-ը տրամադրում է ծառայությունների լայն շրջանակ, ներառյալ՝

- Ապահովում է, որ Լոս Անջելես քաղաքի բոլոր ծրագրերը, ծառայությունները, միջոցառումները և հարմարեցումները հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց,
- Աշխատատեղերում տրամադրում է որջամիտ հարմարեցումներ քաղաքի հաշմանդամություն ունեցող աշխատակիցների համար,
- Տրամադրում է որջամիտ հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող անձանց, ովքեր օգտվում են քաղաքի ծրագրերից, ծառայություններից և հաստատություններից,
- Պաշտպանում է խտրական վերաբերմունքի արժանացած հաշմանդամություն ունեցող անձանց շահերը,
- Տրամադրում է տեղեկություններ ծառայողական և հուզական աջակցություն տրամադրող կենդանիներ ունեցող մարդկանց իրավունքների և պարտականությունների մասին,
- Տրամադրում է ընդհանուր տեղեկություններ տանտիրոջ և վարձակալի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ համաձայն հավասար բնակավայրի իրավունքի մասին օրենքի,
- Ներգրավում և ուսուցանում է հաշմանդամություն ունեցող անձանց արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման վերաբերյալ, և
- Առաջարկում է սահմանված կամ առկա հաստատությունների և դրանցում իրականացվող նախատեսված կամ առկա ծրագրերի, ծառայությունների և գործողությունների հասանելիության գնահատում:

- Աջակցում է փոքր բիզնեսներին՝ տրամադրելով հասանելիության ուղեցույց ֆիզիկական հատկանիշների և առաջարկվող ծառայությունների համար:
- Մշակում է հարմարեցումների տարբերակներ և աջակցում է քաղաքի վարչություններին քաղաքականությունների լուծումներին, ներառյալ ներքին աշխատողների մտահոգություններին և հանրային ծառայություններին վերաբերող հարցերում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄ (CORE)

CORE-ը ստեղծում է շարունակական համագործակցային հարաբերություններ՝ խթանելու հաշմանդամություն ունեցող անձանց ուղղորդումները սոցիալական ծառայություններ, որոնք կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում, բնակավայրեր, շտապ օգնության ապաստարաններ, մատչելի փոխադրամիջոցներ, աշխատանքով ապահովում, աշխատանքի վերապատրաստում: Համայնքային ուսումը, միջոցառումները և ներգրավման գործողությունները համակարգվում են ամբողջ տարվա ընթացքում՝ հանրությանը տեղեկացնելու հաշմանդամության հետ կապված հարցերի և ռեսուրսների մասին՝ անկախ ապրելակերպը բարելավելու համար: Բացի այդ, CORE-ն անվճար օգնություն է տրամադրում այն բնակիչներին, ովքեր տանը երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների կարիք ունեն:

## ՁԻԱՀ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ (ACO)

ACO-ն ստեղծվել է 1989 թվականին քաղաքապետարանի կազմում՝ ռազմավարությունների և քաղաքականությունների մշակման միջոցով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներին պաշտպանելուն ուղղված համակարգված արձագանք տրամադրելու համար: Այն մտել է DOD-ի կազմի մեջ 2000 թվականին:

ACO-ը հայտարարեց Լոս Անջելեսը որպես երկրի առաջին քաղաք, որը մշակել է համակարգված քաղաքականություն՝ կանխելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումը և պաշտպանելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձանց քաղաքային աշխատանքում:

Մատուցվող ծառայությունները ներառում են.

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ռիսկային վարքագծի, կանխարգելման միջոցների և առողջության սոցիալական որոշիչ գործոնների նորարարական ուսումնասիրություն,
- Համայնքային կազմակերպությունների հետ պայմանագրերի մշակում և կառավարում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ուսուցում և կանխարգելում ապահովելու համար, ներառյալ ՄԻԱՎ-ի

թեստավորում, բարձր ռիսկային խմբերին ուսուցողական կյուբերի տրամադրում և վնասի նվազեցում մաքուր ներարկիչների փոխանակման միջոցով,

- Կազմակերպություններին կարողությունների զարգացման և տեխնիկական աջակցության տրամադրում՝ ծառայությունների մատուցումը բարելավելու համար,
- Սեմինարների և հանրային ժողովների կազմակերպում՝ համայնքին և մատակարարներին ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց վրա ազդող համապատասխան խնդիրների վերաբերյալ ուսուցանելու նպատակով, և
- Լոս Անջելեսի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի քաղաքականության կիրառում և վերահսկում, ներառյալ քաղաքապետին և քաղաքային խորհրդին ՁԻԱՀ-ի խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
- Pro-bono (հանուն հանրային բարօրության) իրավաբանական ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ովքեր անօթևան են կամ անօթևանության վտանգի տակ են:

## ՀԱՍԱՆԵԼԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ (ACD)

Հասանելի հաղորդակցությունների բաժինը պատասխանատու է վարչության հաղորդագրությունների տպագրման, հեռարձակման և սոցիալական ցանցերում հետևողական և հասանելի տարածման համար: Բացի այդ, այս բաժինը քաղաքային պաշտոնյաներին և վարչություններին տրամադրում է ուսուցում և տեխնիկական աջակցություն թվային հասանելիության և օժանդակ տեխնոլոգիաների վերաբերյալ, ինչպես պահանջվում է ADA-ով և վերականգնման մասին օրենքի 508-րդ բաժնով:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ (ASD)

ASD-ը տրամադրում է ընդհանուր վարչական վերահսկողություն DOD-ի նկատմամբ՝ ապահովելով, որ գործողությունները լինեն կազմակերպված, արդյունավետ և համապատասխանեն քաղաքային, նահանգային և դաշնային պահանջներին: Այս բաժինը կառավարում և վերահսկում է DOD-ի բյուջեի մշակման և հաշվետվության գործառնությունները, ծառայում է որպես անձնակազմի վարչության կապակցող անձ և վարչական աջակցություն է տրամադրում հաշմանդամության հարցերով հանձնաժողովին: